

ԴԱԻԻԹ ԲԵԿ

ԿԱՄ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՑԻՈՅ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1975 թ. 3-4, էջ 324-347)

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ

ՈՐՈՆՑ ՄԵՋ ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ Է

ԴԱԻԻԹ ԲԵԿԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ամբողջացնելու նպատակով մեր հաղորդումները Դաւիթ Բէկի պատերազմներուն, «Պատմութիւն Ղափանցոց» գրքին հրատարակութեան առիթով, ինչպէս նաեւ ԺԷ. եւ ԺԸ. դարերու հայ ազատագրական շարժումի մասին, այստեղ պատշաճ կը նկատենք Ս. Ղազարի Մխիթարեան դարաւոր դիւանէն քաղելով՝ առանձին դրուի մը տակ հաւաքել այն բոլոր տեղեկութիւնները, որոնք Փոքր Ասիոյ եւ Կովկասի զանազան քաղաքներէն Վենետիկ ուղարկուած են՝ այս պատմական մեծ եղելութեան որպէս կենդանի արձագանդ:

Մխիթարեան բազմաթիւ վարդապետներ, որոնք քարոզութեան նպատակով, ինչպէս նաեւ հայերէն հին ձեռագիրներ ու արուեստի վկայութիւններ հաւաքելու համար կը շրջէին Արեւելքի հայաշատ քաղաքները (Պոլիս, Էրզրում, Էնկիւրի, Ախլցխա, եւն...), Դաւիթ Բէկի եւ անոր քաջերուն հերոսական արարքներուն մասին լուրեր կը հաղորդէին Մխիթար Աբբաճօր, որ հոգեւոր ու մշակութային վերելքի մը մտահոգութեամբ՝ տենդագին աշխատանքի էր լծուած, իր հետեւորդներով, Վենետիկի խաղաղ միջավայրին մէջ, ճիշտ այդ օրերուն: Կը հաղորդեն նաեւ տեղական այլ լուրեր:

Հայրենասիրական ոգիով գրի առնուած այս փոքրիկ լուրերը, որոնք Ստեփան Շահումեանի եւ Աւետիք քահանայի պատումներու

1976

ԺԷ. ԵՒ ԺԸ. ԴԱՐՈՒ ԱԶԱՏԱԳՐ. ՇԱՐՃՈՒՄԸ

87

կողքին՝ մեր ազատագրական շարժումի խօսուն մասունքներն են, կու գան վկայել թէ ինչպէս Մխիթար Աբբաճօր եւ Ս. Ղազարու բուն մը վանականները՝ հեռաւոր իրենց պանդխտավայրէն՝ խանդավառօրէն կը հետեւէին հայրենիքի իրադարձութիւններուն, վերածնունդի մեծ երազով:

Կան յիշատակարաններ ալ՝ ուրիշներէ դրուած:

Վկայաթուղթերը դասաւորած ենք ժամանակագրական կարգով, յաճախ երկարաշունչ նամակներէ քաղելով միայն մեր նիւթին հետ առնչուող մասերը: Կը յստակենք միայն կէտագրական բաժինը:

* * *

1. «... Լէկզին էառ զՇամախի, բայց ըստ գաղանարարոյութեան իւրոյ ոչ կոտորեաց զքրիստոնեայս, այլ զպարսիկս զամենեսեան ի սուր սուսերի մատնեաց եւ տիրապետեաց զքաղաքն»:

Գաբրիէլ վրդ. Թէոդուպոլսեցի առ Մխիթար Աբբայ, 1721 Յոկտեմբեր 21, Էրզրումէն:

2. «... Լէկզին էառ զՇամախի եւ զԳէնճէ եւ զբազումս հար ի սուր սուսերի մաշեաց»:

Պօղոս վրդ. Սիմոնեան առ Մխիթար Աբբայ, 1722 Յունիս 4, Ղալաթիայէն:

3. «... Դարձեալ Միրվէյ ողլին, այսինքն՝ աղուանք եկեալ Սպահանու Ջուղայն դերեցին զամենեսեան եւ մանաւանդ զՇահրիմանեանն. Լէկզին եկեալ էառ զՇամախին եւ զԳէնճէ, թագաւորութիւնն Պարսից վերջանայ: Յառաջ քան զայս ամառ մի Փարվէյ այնքան մեծագոյն շարժ եղեւ, մինչ զի բոլոր քաղաքն կործանեցաւ»:

Գաբրիէլ վրդ. Թէոդուպոլսեցի առ Մխիթար Աբբայ, 1722 Յունիս 12, Էրզրումէն:

4. «... Սպահան Միրվէյս օղլին թէպէտ վաղ ուրեմն պաշարեալ էր, զինի Ջուղայ առնելոյն եւ գերելոյն աւելի քան զքսան աղջկունս, որոց մինն է եւ Շէհրիմանենց աղջիկն, եւ կողոպտելոյն զինի ասեւ եւս Սպահան առաւ, նմանապէս եւս Լէկզին զբազում գիւղս եւ գաւառս պարսից աւերեաց եւ զբազում հայս ի սուր սուսերի մաշեաց եւ զոր ինչ առ յապա լինելոց է տակաւին չէ յայտ»:

Գաբրիէլ վրդ. Թէոդուպոլսեցի առ Մխիթար Աբբայ, 1722 Օգոստոս 26, Էրզրումէն:

21.

«... Եւ ամենայն թաղաւորութիւն տաճկացի ի մեծամեծաց մինչեւ ի փոքունս ի դրօսանս եւ ի յուրախութիւնս են, եւ միշտ վասն նիւթական շինութեան քաղաքին աշխատին, թէ մեծամեծք եւ թէ փոքունք, բայց հուրն ոչ թողու, այլ միշտ անպակաս սպառէ եւ ոչնչացուցանէ: Եւ վասն յաղթութեան թէրվիղու հրամանաւ թաղաւորին հինգ օր եւ հինգ գիշեր չէ՛հր տօնանմասի արարին: Թէպէտ վասն պատճառի այսմ յաղթութեան ասեն թէ այնքան բաղմունքիւն տաճկաց անկեալ են ի պատերազմի, մինչ զի ոչ գոյ թիւ, ասեն: Ոչ գիտեմ ո՛հ թէ այսու յորժամ վերջանալոցք են եւ ոչնչանալոցք: Եւ այլ ինչ ոչ գոն այժմուս, բաւ է այսքանս, ողջ լերուք ի Տէր»:

Հ. Պետրոս վրդ. առ Մխիթար Արքայ,
1725 Սեպտեմբեր 20, Կ. Պոլսէն:

22.

«... Օսմանցիք առին զՀամադան, զԴավրէժ, զՆախջաւան եւ զայլ գաւառս եւ գրեթէ ոչ ուրեք մնաց հայ որ ոչ գերեցաւ, բնաւքն են կանայք տղաք, աղջկունք, արք սակաւ յոյժ, եւ պարսիկք անբաւ, եւ ճանապարհք լցան դիակամբք օսմանցւոց, ոչ ի պարսից կոտորելոց այլ ի միմեանց»:

? ? ?
1725 Սեպտեմբեր 20, ?

23.

«... Նախ ի սկզբան Օգոստոսի տօնանմայ արեր են հինգ օր վասն թէվրիղու: Նաեւ թիւֆլիղու եպիսկոս եղբայրն Բաղթոն խանին է աստ, որպէս հրեշտակ սպասաւորօք եւ եասախճիօք ի վլանկայ մերձ Նիկողայոսենց տանն բնակի, ես եւս տեսի. սպիտակամօրուս մարդ մի է, ասեն վասն սորա թէ Ապտուլլա փաշային օգտութիւն արեր է, եւ ճանապարհ ցուցեր է: Նա ծանուցեր է վեղիւրին զբարութիւնն նորին. վասն որոյ վէզիրն եւս կոչեր է զսա աստ, ոչ գիտեն թէ զինչ պարտի առնել: Եւ բազումք գերիք հայոց բերին, եւ մի աղջիկ ութ ինն ամաց Երեւանու գեղաներուն, որոյ հայրն սպաննեցեալ, մայրն եւ քոյրն գերի վարեալ ոչ գիտէ թէ ո՛ւր է, բերին ի տուն հաճի Յարութենենց եւ կամեցան զնել մինչեւ ի ճ զուրուշ»:

Հ. Մխիթայէլ վրդ. Սեբաստացի առ Մխիթար Արքայ,
1725 Սեպտեմբեր 22, Կ. Պոլսէն:

24.

«... Ի 23 Սեպտեմբերի եկն լուրն առման Կէնճէյու, հինգ օր տօնանմայ արարին թոփից եւ ի վերջի գիշերն զարմանալի պայծա-

ռութիւն լապտերաց ի վերայ ծովու ի վերայ նաւուց եւ նաւակաց Լսկուտարու մինչեւ ի Կէմրիւկն Ստամպուլու պայծառութիւն եւ այլք արհեստական հուրք եւ որոտմունք բերդից եւ դղեկաց այրեցմունք, յորոց հուր արհեստական իբրեւ զսօս եւ իբրեւ զջրմուխ բարձրանայր յերկինս, եւ անթիւ թօփից արձակմունք, աւելի քան զհինգ ժամ տեւեաց: Բազում աղջկունք փոքունք գերիք, հազիւ գտանի զնօղ ի քրիստօնէից, աղէտ նոցին է յոյժ: Յոմանց լուաք թէ խաբէաբար գունդք հայոց ի ձեռս անկեալք սրախոխողք եղեալ են, եւ յոմանց թէ տաճկունք բազումք անկեալք են ի նոցանէ:

Հ. Մխիթայէլ վրդ. առ Մխիթար Արքայ,
1725 Հոկտեմբեր 5, Կ. Պոլսէն:

25.

«... Գոյ զրոյց թէ Մոսկովն եկեալ Ղափանստան տիրեր է, հայոց խումբն գերծեալ եւ իշխանութիւն տուեալ նոցա»:

Հ. Մխիթայէլ վրդ. առ Մխիթար Արքայ,
1725 Նոյեմբեր 27, Կ. Պոլսէն:

26.

«... Նաեւ ի Շօշ քաղաքէ եկն աստ հրեշտակ, ընդ նմին եւս աղայ Աստուածատուրի եղբայրն Մանուէլ կոչեցեալ իբրեւ զխորհրդական եւ առաջնորդ նմին, զի այնպէս յանձնեցեալ է նմա ի հլրդական եւ առաջնորդ նմին, զի այնպէս յանձնեցեալ է նմա ի հլրդական պետէն աղուանից գիտելով զել եւ մուտ. բայց աստ արգելաւոր են անուանել զնա հրեշտակ, այլ ասել թէ ոմն եկեալէ, եւ Մանուէլ աղան կամեցեալ էր տեսնել զԿարապետ չէլէպին Էրզրու-մեցի, երիցս զնացեալ, ոչ եղիտ հնար տեսնելոյ եւ խօսակցելոյ, զի արդեալ է եպարքոսն թէ ոչ ոք մտցէ առ նոսա, եւ ոչ ոք ի նոցանէ ելցէ արտաքս ի պալատէն. այն Կարապետ չէլէպին յանձնեաց ինձ գրել զի ծանուցեալ լիցի եղբօրն իւրոյ աղայ Աստուածատուրին, թէ՛ րեւս ինքն եւս գրէ, շատ ջանայ թէ հնարիւք մի պուլուշիչ լինի:

Հ. Մխիթայէլ վրդ. Սեբաստացի առ Մխիթար Արքայ,
1726 Փետրուար 2, Կ. Պոլսէն:

27.

«... Անկարելի եղեւ ինձ ելանել ի Գաղատիոյ յառաջ քան զվեց ամիսն զնալոյս, թէ եւ ողուով Հափ ջանացի եւ զճի ի վարձու կալայ, զոր արձակեցին ասելով թէ այնքան տաճկունք պալանն ի ճալարհս թօխաթու ի զինուորաց տաճկաց, ո՛ւր կու մնաս դու որ ոչ միայն հայ ես այլ եւ կարգաւոր, եւ զայս արդար եւ ես գիտեմ այնպէս զուլ, ուստի եւ ես անսացի նոցա՝ զի մի գուցցէ փորձեցից

37.

«... Ձայն որ ասէք թէ ի տեղիս բարի յիշատակ Հ. Գաբրիէլ վարդապետ մերոյ եւ ի Տիգրան կարես չըջել, մտածելն եւս է անօգուտ, թող թէ ի յայնս չըջել, մի գիւղ մնա՞ց կամ բնակութիւն կամ արտորայք եւ կամ կենդանիք ի յաստատակէաց անտի թէ վրաց թէ մարաց, թէ թորգոմաց, թէ պարսից եւ թէ տաճկաց: Ձի այս ոչ ինչ գործի այժմ յայնս կողմանս եթէ ոչ աւար առնուլ զինչս ճանապարհորդաց եւ զո եւ իցէ ազգս գերել եւ վաճառել, միայն թէ ի քաղաքս ծովեզերայս՝ եւ յայս կողմունս տաճկաստանի այսինքն, յԱխսխայ, ի Կարնի, ի յԵւդոկեայ, ի Գոնեայ մինչ ի Սեւաստ, ապա թէ անդրադոյն ոք գնասցէ պարտի թռչուն լինել եւ ընդ յօթն անցանել, զի անվնաս մնասցէ: Ապա թէ իցէր կարելի ի Տիգրան գնալ, ընդէ՞ր ուրեմն չուտով դարձայ աստ, միթէ կարօտ էի տեսանել: զայս վրդով կարգաւորաց, զի ուր կարգաւորք բազումք գոն անդէն ծնուցանէ սատանայ գնախանձն եւ այլն...»:

Հ. Յակոբ վրդ. միայնակեաց Բուզայեան առ Մխիթար Աբբայ, 1727 Ապրիլ 12, Ղալաթիայէն:

38.

«... Մօտերս Կաթողիկոսն աստի յիզմիր գնալոց է, եւ անտի յէնկիւռի, եւ ասեն թէ անդ մնալոց է մինչեւ յոր կողմն եզերիցի պատերազմն»:

Հ. Ստեփաննոս վրդ. առ Մխիթար Աբբայ, 1727 Ապրիլ 14, Կ. Պոլսէն:

39.

«... Նաեւ այժմ այսպէս զրոյց գոյ աստ, թէ սոքա ընդ տիրողի Շօշ քաղաքի հաշտեալք են, յետս դարձուցանելով զոր ինչ առեալք էին»:

Հ. Միքայէլ վրդ. Սեբաստացի առ Մխիթար Աբբայ, 1727 Օգոստոս 1, Կ. Պոլսէն:

40.

«... Ծանիր հայր իմ զի հազիւ կարացաք զկնի քառասնից աւուրց մտանել ի Թոխաթ, Կ. Պոլսէն, զվիշտս մեծամեծս կրելով ներ ճանապարհին, եւ այս վասն ահի իշտրէին, այսինքն վասն հրամանի արքունականի որպէս զի ուր եւ գտանիցին բեռնակիրք ձիք եւ ջորիք անդէն փուլցանիցին բեռինքն վաճառականաց եւ փոխանակ նոցունց բառանայցեն զկերլիս զօրաց ի պատերազմ գնացողաց եւ տարցեն ի Համետամ. զայս ինչ լուսն ջորեպանքն սկսան երկնչիլ եւ փախչիլ եւ ի յանձանօթ լերինս եւ ի ճախին դաշտս եւ յանվայրաբնակ փա-

պարս լերանց բնակիլ եւ եւս յերեկոյէ մինչեւ ի կէսօր փախստեայ գնայաք եւ հազիւ կարէաք գտանել զճորակ մի եւ իջէվանէաք անդ, ուր ոչ կարէաք ի սաստկութենէ տօթոյն եւ ի բազմութենէ պիծակաց ննջել, եւ եւս ոչ կարէաք գտանել զկորեկի հաց գոնեայ, գիւղականքն մինչ տեսանէին զմեզ յանձանօթ ճանապարհին, ապուշ մընային թէ զիա՞րդ եկիք աստ եւ աստի զիա՞րդ կարէք յայլուր գնալ, մինչ ոչ գոյ անց ճանապարհին»:

Մղտնի Ստեփաննոս առ Հ. Եղիա վրդ. 1727 Օգոստոս 3, Թոխաթէն:

41.

«... Յարեւելից եւս ոչ գոյ լուր ինչ, ասեն թէ հաշտութիւն արարեալ են, բայց գոյ կարծիս թէ աւերեցեալ են»:

Հ. Ղազար քհնյ. առ Մխիթար Աբբայ, 1727 Հոկտեմբեր 30, Իզմիրէն:

42.

«... Կոտորած մեծ եղեւ տաճկաց ի ձեռաց Սղնացւոց, թէպէտ գոյ մեծ տարաձայնութիւն ի մէջ առաջիկայից Սղնացւոց, եւ այս ոչ է զարմանք»:

Հ. Եղիա վրդ. առ Մխիթար Աբբայ, 1727 Նոյեմբեր 6, Կ. Պոլսէն:

43.

«... Հայոց Հոգւոր Տէրն ներկայիս տեղս է, գնալոց է էջմիա-ծին»:

Հ. Յակոբ Կարմեցի առ Մխիթար Աբբայ, 1727 Դեկտեմբեր 2, Կ. Պոլսէն:

44.

«... Նաեւ վասն արեւելեան աշխարհին ասեն թէ մորթակարք, պարսիկ մերազնեայք եւ վրացիք միաբանեալք՝ Թափեր են ի ձեռաց Շօշ քաղաք եւ զայլ տեղիս ի ձեռաց տաճկաց, եւ զեկրատան պաշարեալք, ուստի, ասեն թէ ի գալ տարւոջ տէր տեղւոյս այսորիկ զզօրս առաքեսցէ»:

Հ. Միքայէլ վրդ. Սեբաստացի առ Մխիթար Աբբայ, 1728 Սեպտեմբեր 3, Կ. Պոլսէն:

45.

«... Դարձեալ լուայ թէ գոյ ժանտացաւ Ախլըցխայ, մարդիկ ի տեղին այնորիկ փախեալ են, Հ. Յակոբ ընդ նոսին: Այլ եւ գոյ տեղիս ժանտացաւ եւ մեք գնալով հանապազ ներ նոցա, մին քահանայ

գոյ ընդ իս օգնիչ միայն յոյս մեր մնաց առ Սրբուհի Կոյսն Մարիամ եւ միաբանից սուրբ աղօթքն»:

Հ. Յակոբ Ներսէսեան, Էրզրումցի, առ Մխիթար Աբրայ,
1728 Սեպտեմբեր 15, Էրզրումէն:

46.

«... Բազում վրացի գերիս ածին ի Կ. Պօլիս»:

? ? ?

1728 Սեպտեմբեր 28, Կ. Պօլսէն:

47.

«... Ի նմին, Կարնոյ մէջ, գտեալ զցանկալին իմ Վերապատուելի Հ. Յակոբն ոչ սակաւ լիացաք մխիթարանօք իրերաց, մի զարմասցի տէր, յաղագս կոչելոյն զցանկալին իմ, զի ես հաւատամ թէ հրեշտակաց եւս ցանկալի է, թող թէ ինձ նման մարդոյ: Եւ այս յաղագս պէսպէս բարութեան նորին, զորոց յառաջն լուեալ գոլով, եւ արդ ակնատես եղէ, ուստի իրաւունս վարկիմ անուանել զսա ընտիր սիւն մի մերոյս միութեան, եւ զի ոչ կրթեցեալ գոլով ընդ մեզ ի մանկութենէ ընդ կրօնում, գերազանց գտաւ, ըստ յիմ մասի ասեմ: Իսկ ես որքան զմիտս բերեմ զնորին բարութիւնն, վերաքաղեմ զդիպուածն սրբոյն Պօղոսի առաքելոյն, որ աչ բնաւ ուսուցեալ գոլով ի սրբագունեղ դպրարանէն Քրիստոսի, եւ կամ ճաշակեալ զհամեղագոյն ճաշն վարդապետութեան մարմնացելոյ Բանին, որպէս զայլս առաքեալս, առաւել գտաւ ջանիւք եւ վաստակօք քան զայլ առաքեալս, որպէս ինքն ասէ, թէ առաւել եւս ես: Ապա բազմիցս ասեմ, եւ արդ ասացից, թէ անաղօտ պահեսցէ Տէր զՁահս այս մինչեւ ի վախճան կենի իւրոյ ի փառս իւր, եւ ի պատիւ մերոյ հասարակութեան: Եւ ի Կարնի 2 ամիս եւ կէս մնացի եւ այն ի յաղերսանաց հօր մերոյ Յակոբայ եւ ի թախանձելոյ ժողովրդեան, եւ զի ուր արեգակն գոյ, անպիտանայ աստղն: Իսկ գոհունակութիւնն ժողովրդեան վասն բարութեան հօր մերոյ՝ կարի առատ է, ուստի հաճեալ են ամենեքեանք: Այլ տէր Պետրոս անուն ոմն քահանայ, որ երբեմն ի տեղի հօր մերում լեալ է ի Կարին, կամի Հոռմ գալ, եւ կարծեմ թէ վասն իշխանութիւն առնելոյ, որով կարասցէ նախադասիլ քան զհայրն մեր Յակոբ, ըստ առակին, թէ աղուէսն պէրաթէ առեալ զի գիւղօրէքն պատուեսցեն զինքն եւ զմի մի հաւ տայցեն ինքեան, բայց յորժամ մատուցեալ է դպէրաթն, չունքն գիւղից ըզպատուական մորթն ի թիկանց աղուիսուն փեռեկտեալ են, այս իրիցուն պատմութիւնքն բազումք են, ի կողմանէ քորիցն վախճանեալ հօր մերոյ Գաբրիէլի, զորոց թերեւս գրեաց վեր. Հ. Յակոբ: Եւ ի

Կարնոյ Յունվարի ելի ի ճանապարհ եւ հասի ի Ծ աւուրն ի գիւղ ի մերձ Ախսխոյ, եւ անդէն մինչ գտեղի առեալ էի յաւուրս երիս, ահա եկին իշխանք քաղաքին տէր Յովանէսիւն եւ մեծաւ ընդունելութեամբ ածին ի քաղաքն: Եւ ի նմին յետ ի գործ ածելոյս զանպիսնն չորս ամսեայ ժամանակաւ՝ յարեաւ կոտորիչ ժանտամազ մի հանգոյն Մարսիլիոյ ժանտամազին, մինչ զի ահիւ կը տանիւր մարդ կենդանի որ թաղիցէր զմեռեալն, ուստի ձայն ետու ժողովրդեանն մի փորձել զՏէր, ասելով, որով վախճանն հասեալ է մեռանի, եւ որոյ ոչ, ապրի: Ապա որք լուանն ինձ եկին ինեւ հանդերձ ի լերինս թողեալ զկահ եւ զկարասին ի քաղաքն, եւ որք ոչ եկին ընդ մեզ ի լեռանն, կամ յաղագս աղքատութեան եւ կամ յաղագս անհոգութեան կոտորեաց զնոսա մահն անխնայ, եւ որք ի լերինս էին, գոհանային զԱստուծոյ եւ օրհնէին զծառայք եւ ասէին, Եղեր առիթ հոգեւոր եւ մարմնաւոր կենաց մերոց, յորժամ լսէին զանհամար մահացեալս գիւղից եւ քաղաքաց, եւ թէ որպէս ապրէաք ի լերինս՝ ոչ պատմեցից զի մի առաւել դատեալիք: Եւ այս ահարկու մահն սկսաւ ի Ծօշ քաղաքէ Պարսից եւ տարածեցաւ ի բոլոր Պարսկաստուն եւ անտի եհաս ի վրաստուն եւ մինչ կարծէի թէ ի Տաճիկս չիցէ եղեալ, ահա եհաս գիր մի ի Կարնոյ ի լեռան ուր էաք, գրեցեալ ի Հօրէ մերմէ, նորում յետ ծանուցանելոյ զիրս հարկաւորս, մաղթէ զաղօթս ի մէնջ, յաղագս սաստիկ ժանտամազին որ ընթանայ ի քաղաքն եւ ի գաւառս շուրջ գիւրեւ, եւ ոչ գիտէր հայրն մեր, թէ եւ մեք ի լերինս ցրուեալ եմք յայնր աղագաւ: Եւ մինչ ի լեռան էաք ահա երեւեցաւ ոմն մեծամօրուս ի լեռնակողմէն, առ որ առաքեցաք ոմն իմանալ թէ յ՞մ իցէ, առ որ հարցեալ է այրն թէ աստ իցէ քարոզիչն Ախսխայու, իբրեւ ասացեալ է այո, ասէ ցմերայինն, Երթ, եւ ասա նմա, թէ պատրի մի եկեալ է եւ խնդրէ զքեզ, եւ իբրեւ գնացի եւ տեսի, ահա էր Վենետիկցի պատրի մի գափուչին ի Ռետենթօր վանքէ եւ էր փախուցեալ ի Կօրի քաղաքէ յաղագս ժանտամազի, եւ իբրեւ երկնջէաք զի մի գուցցէ մահող իցէ, ասէ, մի հոգայք բնաւ, զի բազում օր է յորմէ հետէ ելեալ եմ եւ ոչ բնաւ ի չէնս մտեալ եմ, որ եւ կեցեալ ընդ մեզ աւուրս երկուս եկեալ մօտաւոր փախուցեալ եղբարքն տարին գնա, զի անդ պատարագեսցէ: Եւ պատրիս այս կամէր գալ ի Րէտենթօրն, ուստի զայն գիրս ի լեռան քրեցի եւ ետու նմա բերել, եւ գրիս մելանն է ի Ծխոյ մախրի գրիչն՝ եղեգն շանթից, իսկ թուղթն տաճիկի, եւ երկնջիմ գուցէ մինչեւ եկեսցէ թուղթս մելանն թափիցի եւ լինիցի բանն աննշան: Եւ ընդ պատրոց գաւառացս թէ Թիֆլիզու, թէ Կորու, թէ Ճավախէթու, եւ թէ Քարթուկու յճժ սիրահարեցաք, ոչ ներկայութեամբ, այլ փոխաբերական գրով, ուստի բազմիցս հրաւիրեցին զիս մտանել ի գաւառս յայնս խոստանալով զպէսպէս հանգիստս եւ ասելով թէ եկ եւ հանգիր սակաւիկ մի ի մերս վանս, գի-

տեղով թէ ուրեք զվանա ոչ ունիմք որպէս ինքեանք ունին: Եւ թէ առաւել գործունեայ է քան ձեր քան զմերն, ըստ որում էք ի նոյնոյ ազգէ եւ այլն, որոց պատասխանեցի բազմաւորակի քաղաքավարութեամբ թէ մեծաւորքն մեր ոչ պարաւանդեն զմեզ մտանել յայնս դաւառս, յորում դոն հարազատ հովիւք, այլ յայնս, յորում դոն հունձք բազումք եւ ոչ մի հովիւ եւ այլն: Եւ եթէ իցէին դաւառքն ի ներքոյ կարմրին, որպէս յառաջն էին թերեւս քնայի, բայց են ի ներքոյ ճերմկի որ չարագունեղ է քան զկարմիրն՝ անխոհեմ վարկի: Մանաւանդ իբրու արգելում մի եւս դոյր ի միում գրի Գերյարգելոյդ, թող թէ Ախսիացիքն եւս ոչ թոյլ տային: Եւ մինչ յաւելին ի դերել՝ պատասխանեցի այլով բանիւ, թէ ճերմակն վնասէ մեզ, զի եմք ի տերութեան նորին, ասեն մի երկնչիւր վասն այդմ, զի մեք զհրովարտակն ճերմկին կրեմք, եւ ոչ է հնար այդմ լինիլ, եւ ոչ յիշեն միամիտքն թէ քանի՞ք ի յիւրանոցն կրելով զնոյն հրովարտակն ի նոցունց սպաննան: Եւ յայսմ նուազի եկն ի միտս պատրի Եաչինթոն քաղաքակութեան հրովարտակն, որ առաւել արտաբուրէր զհոտն, որոյ անունն պատկառեմ ասել, քան թէ զխաղաղութիւնն արտայայտէր: Ուստի հաւատամ թէ առաւել ապահովագոյն չըլիմք մեք հոգեւոր հօրն լոկ հրամանագրովն քան թէ բեհմովթին մրովն»:

Հ. Յակոբ Վրդ. Բուգայեան առ Մխիթար Աբբայ,
1728 Սեպտեմբերի վերջն, Ախլցխայի մօտ լեռնէն:

48.

«... Նաեւ աստէն բուռն արկանեմ զերկուց իրաց համառօտապէս ճառել, զի իբրու երկու ամիս յառաջ մատանին դազանիս այսորիկ հրամայեաց թէ զորմունս տանց թէ փողոցաց, թէ շուկայից եւ թէ զպարիսպս քաղաքին ըստ տեղւոյն կամ բռամբ սպիտակացունիցեն կամ կարմիր դեղօք ներկիցեն, որպէս արարին իսկ վասն պատուելոյ զեկօղ հրեշտակն Աղուանից ի չխանին, տիրողն Ծօշ քաղաքին, մինչ մերձեցաւ ժամանակն մտման նորին ի քաղաքս, հրամանն սաստկանայր հանդերձ տուգանօք, թէ ոք ոչ արասցէ ըստ հրամանացն եւ կարի փութացուցանէին, ի թերահանուն եղեալ նաւին եւ կալերքն ներկեցան երանգօք զարդարեալք անտի մինչեւ ի Տօլմա Պաղլան կարգեցան, ուրեք նաւք, ուրեք կալերք, երկու կալերք ի յիւսկիւտար գնացին առ ի բերել զեկողն, ի յաւուր մտման նորին, դղրդեցաւ քաղաքն, մեծ հանդէս եղեւ եւ բազմութիւն ժողովրդեան եւ նաւակաց անթուելեաց ի մէջ անկեալ ծովակն Ստամպուլու եւ Ղալթիու սեւացեալ էր նաւակօք, մինչեւ ի Ղզիւիւլէն եւ ի Տօլմա Պաղլան: Աստի սկսեալ մինչեւ ի Թերսխանան 1.400 հրացան արձակեցան, եւ մինչ հանին ի ցամաքի բազում կարգօք եւ զարդարա-

նօք չըջեցուցանելով 7 ժամ ի քաղաքն տարեալ բազմեցուցին ի պատրաստեալ պալատն ի ծայրն քաղաքին ի բարձրագոյն տեղւոյ ի քամակն էյիպու: Բայց մինչ զայսքան փառս եւ զբարձրութիւնս ցոյց ետուն, տեսէք թէ զինչ եղեւ առ յապայ, զինի չորից աւուրց, յորում աւուր եմուտ եւ Հ. Պօղոս Վ. մեր, մեծ հրկիզութիւն եղեւ, ԺԲ ժամու աւուրն սկսաւ, տեսց մինչեւ ի յուր ժամ գիշերոյն, ասեն թէ այսպիսի հրկիզութիւն չեն տեսեր, հոգմն էր սաստիկ, սկսեալ ի ծովեզերէ Պալաթոյն զերիս լերինս քաղաքին, հանդերձ իւրօք ձորօքն այրեաց, բոցն 20 եւ այլ աւելի ճեղք բաժանեալ, չորս ազգին եւս մեծապէս վնասեաց, հայոց, յունաց, հրէից եւ տաճկաց, ասեն 50, 60, եւ աւելի տուն եւ պալատ այրեալ 1.000, հաճի Մաթոսեց քարէ տունն եւս ոչ կարէ բնակիլ. 60 վճարելու տեղիք այրեցան, 13 եկեղեցի այրեցեալ, որոնց մինն է Հայոցն եւ այլն յունաց, փաթրիքն աւելի քան զձ քսակ բոլոր ճաղապեալ, զի չըջակեայ եղեալ տանց դինն վճարեալ, կանխապէս փուլցեալ, որով ապրեցոյց զպատրիարկական եկեղեցին, որ է Փէնէոն, բազում ինչք եւ ապրանք եւ անձինք այրեցան, խեղճութիւնք, անբնակութիւնք եւ հողորմելութիւնք բազումք»:

Հ. Միքայէլ Վրդ. Սեբաստացի առ Մխիթար Աբբայ,
1729 Օգոստոս 28, Կ. Պոլսէն:

49.

«... ի նոյնում աւուր, 18 Յունիսին, հրեշտակն պարսից մտաւ ի քաղաքս այս, եւ բազմութիւնք յոյժ ընդ առաջ ելին նաւակօք, եւ հրարձակութիւնք ի յեզերաց ծովուն, եւ ի նաւուց բազումք յոյժ: Եւ ասեն համարձակօրէն խնդրէ յետս տալ առեցեալ երկրեացն, զի բեացն եւ տպարանաց թալանացելոց եւ խնդրէ զպատասխանի, զի չուտով յետս դարձցի: Նաեւ ասի թէ տաճիկք զՍղնախի հայերն յաղթահարեալ, ու զգերդաստանիս նոցին գերի վարեալ աւելի քան զքսան հազար բերեն աստ: Վերջապէս աստ քաղմաղան խօսք եւ բանք բազում են»:

Հ. Միքայէլ Վրդ. Սեբաստացի առ Մխիթար Աբբայ,
1730 Յուլիս 10, Կ. Պոլսէն:

50.

«... Որպիսի ամ եղեւ 1730 երորդ ամն, նորում ի ալեկոծութեան, ի միգի, եւ խաւարի էաք, որպէս ի ժամանակի Նփոան լինին, զի թէպէտ երեւիւր թէ մեծագոյն նեղութիւնն եղեւ մինչեւ ցայն վայր մինչեւ եղին նոր թաղաւոր եւ զնորս ի չխանս, սակայն յետ չւման հայր Միքայէլին այնքան նեղութիւնք եղեն զօրպայքն քաղաքացւոց եւ

քրիստոնէից մինչ զի մոռացուցին զվէղիրքեանհան, եւ վերջապէս յաւուր միում խորհրդոյ պատերազմի պատճառաւ ի վերայ Մոսքօֆի զգլխաւոր զօրպապաշխա կոչեցեալք ի պալատն արքունական զ23 ըսպանին եւ մնացեալք քաղեցան եւ զ17 եւս միջոցաւ Դաթարխանին որսացին եւ սպանին, նմանապէս մինչեւ ցայժմ գտանին եւ սպանանին, եւ ծովն Բիւզանդեան լնանեցաւ դիակամբք անհաւատից եւ զապիտքն այժմուս այնպիսիք են, զի մինչ զոք տեսանեն հարբեալ, տան նմա 400 բիրք, քանիք են որք մեռան ի ներքոյ բիրին, եւ ի վերայ այսր ամենայնի յետ զատկին գալոց են ի յԱրեւել առ ի պատերազմիլ ընդ զղպաշին»:

Հ. Պօղոս Վրդ. առ Մխիթար Աբբայ,
1731 Յունուար 20, Ղալաթիայէն:

51.

«Էին ի վենէշ յազգէ մերմէ եղբարք երկու հարազատք, վաճառականք ի Հաբանդ երկրէ Հայաստանեայց: Անուն միում Ստեփաննոս եւ երկրորդին Նահապետ, եւ երկրորդին մեծատունք: Կամ եղեւ սոցա յեկեղեցւոյ մերում զխորանն սրբոյն Գրիգորի աստուածաբեալ Լուսաւորչին մերոյ ի սրբատաշ մարմարու վայելուչ գորշախայտ քարանց կառուցանել եւ առաջի խորանին գտապանատեղի իւրեանց պատրաստել: Եւ հաճութեամբ Աբբայ հօրն մերոյ ըստ օրինակին, զոր նա ետ ի պիտակի նկարագրել եւ հաւանեցաւ, ծախիւք քրիստոսասէր երկուցն եղբարցն այնոցիկ կառուցաւ վայելուչ խորանն ի փառս Քրիստոսի, եւ ի պատիւ Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, եւ գեղերգմանատեղին նոյն եղբարցն առաջի խորանին կազմեցաւ: Այլ եւ պատկեր սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ետուն նկարել, եւ զայլ ինչ ի զարդ նորուն սեղանոյ ծախիւքն իւրեանց հանդերձեալ՝ զարդարեցին: Եւ յետ շինուածոյն կատարելոյ՝ օրհնեաց Աբբայ հայրն մեր զսեղանն, եւ մատուցաւ ի նմա հանդիսաւոր պատարագ»:

Ժամանակագրութիւն վամացս, հտ. Ա, մասն Բ, էջ 380
(1737 թուականիմ):

52.

«Ի 26 ամսոյս (նոյեմբեր) սնանկացեալ այսինքն Փայիդ եղեալ Նահապետն Շահումեան որդի Մարութի ի վենետիկ՝ ծածկեաց զերեսս իւր, այլ ոչ կարաց փախչիլ, զի հիւանդ էր, որով կորեան ոչ սակաւ դրամք մեր ի վերայ նորա, իսկ ինչք Մինասայ եպիսկոպոսի ի սպառ սպառեցան ի նմա, այլ զի եւ նա հիւանդ էր, զգուշացան

մերքն չյայտնել նմա զայս անցս ձախողութեան մինչեւ ցվախճան նորա մօտ ի կատարած տարւոյս, զորմէ ուրոյն գլխով ունիմք գրել»:

Ամդ, Գ. մաս, էջ 195 (1758 թուականիմ):

53.

«Ի չորրորդ օր աւուրն Զատիկի, այն է ի Մարտի 29, յերեկի վախճանեալն պարոն Նահապետ Շահումեան որդի Մարութի Պօղոսեան, թաղեցաւ ի վանս՝ առաջի խորանի Լուսաւորչին, որ է յիշատակ այնր տոհմի, թէպէտեւ ինքն էր յամէ հետէ սնանկացեալ, իսկ դամբարանն ազգի նորա՝ որ էին Ղափանցիք, շինեալ էր ի վաղուց, յամի Տեառն 1737»:

Ամդ, Գ. մաս, էջ 215 (1759 թուականիմ):

54.

«Պատանի մի էր աստուածասէր՝ ի վաճառականութիւն եկեալ յարեւելից՝ Յովհաննէս անուն, ի Հաբանդ երկրէ Հայաստանեայց: Սորա ուշ եղեալ յոգնահանճար բանից շնորհազարդ վարուց եւ մեծամեծ գործոց Աբբայ հօր մերոյ Մխիթարայ. այլ եւ գեղեցիկ կարգօք կացից Միաբանից նորա, ըղձանայր մտից կրօնիս մերոյ: Իբրեւ դէպ եղեւ սմա յառթէ միոյ ի մահաբեր հիւանդութենէ վտանդիլ, ի վերայ ամենայն պատրաստութեանց հոգւոյ իւրոյ զոր վասն յատի կենաց ի շնորհս Տեառն փոխելոյ ջերմ սիրով առնէր. հայցեաց զգգեստ կրօնիս մերոյ ի նշան ջերմեռանդութեան իւրոյ ունիլ իբր զի փոխանակ պատանաց մարմին նորա յետ մահուան իւրոյ նովին զգեցուցեալ թաղեցի: Հրաման ետ Աբբայ հայր մեր, եւ առաքեցին նմա զգգեստն ըստ ըղձման նորա: Սոյն այս պատանի զպատարագիս եթող մեղ կտակաւ, որպէս գրեալ կայ այս ի հաշուեմտից գիրս Միաբանութեան: Եւ ի կտակագրի անդ յայտ արարեալ էր յեկեղեցւոյ մերում թաղիլ, եւ այնպէս եղեւ: Զորոյ եւ զյանձն արարեալ պատարագսն մինչեւ ցայսօր անվթար աննիազ մատուցանեմք»:

Ամդ, էջ 388 (1767 թուականիմ):

55.

«E pregio dell'opera riportare la testimonianza dei notabili armeni residenti a Venezia:

Scritta nell'anno 1718 a dì 24 di Aprile

Io Pietro Vartabied della città di Tiflis affermo quanto sopra (յետ ուրիշ 14 ստորագրութիւններու՝ կը յաջորդեն Ղափանցիներունը, 10 ստորագրութիւն - Հ. Ս. Ա.).

Io Baldassar di Japida da Kapan	affermo quanto sopra
Io Teodoro di Manugh da Kapan	» » »
Io Manugh d'Agapap da Erivan	» » »
Io Arutium di Abele da Kapan	» » »
Io Martiros di Magdesi Paolo da Kapan	» » »
Io Paolo d'Arachiel da Kapan	» » »
Io Filippo di Mesrop da Kapan	» » »
Io Nicolò di Giovanni da Kapan	» » »
Io Nahabied di Costant da Kapan	» » »
Io Ghevond d'Abramo da Kapan	» » »
Io Giovanni di Hurbar da Kapan	» » »

Ego Cacciaturus Arachiel sacerdos, et doctor Armenus missionarius apostolicus pro Armenis Venetiis degentiis fidem facio, et attestor, hanc testimonialem scripturam esse notabilium Armenorum ecclesiasticarum et secularium a me cognitorum hic Venetiis repertorum».

P. Minas Dr. Nurikan,
Il Servo di Dio Abate Mechitar..., Venezia 1914, p. 233.

56.

«Կարծես կը մըցին բարերարք իրարու հետ Աստուծոյ տունը պայծառացնելու համար: Հայութեան պանդուխտ որդիք Ս. Ղազարու կղզեկին մէջ տեսնելով մայր աշխարհին սփոփիչը, չէին խնայեր իրենց լուսման՝ անոր զարդարանքը եւ չուէր աւելցնելու համար: Հաբանդ գաւառէն երկու վաճառական ազգականք, Ստեփան եւ Նահապետ, որոնք վենետիկ կը բնակէին ուղեցին յիշատակ մը թողուլ Մխիթարայ դատակերտին մէջ: Մտածեցին խորան մը չինել Ս. Գրիգոր Լուսաւորչին՝ մարմար քարերով: Մխիթար գծեց ծրագիրը, որուն հաւնելով յիշեալ վաճառականք, անմիջապէս սկսաւ չինութիւնը, գոթացի գեղեցիկ ճարտարապետութեամբ եւ կարմրագոյն մարմարով: Խորանին առջեւ ալ չինուեցաւ երկու եղբարց հանգստեան տապանը: Անոնց ծախսով նկարուեցաւ նաեւ Ս. Լուսաւորչի մեծադիր իւզաներկ պատկերը որ կը ներկայացնէ Տրդատայ մկրտութիւնը: Այս պատկերը ամէնէն յարգի եւ թանկագինն է մեր եկեղեցւոյ պատկերներուն մէջ, զոր նկարած է Փրանկիսկոս Ծունիոյ՝ վենետիկցի Տիեպոլոյ մեծանուն նկարչին աչակերտը:

Խորանին չինութիւնը աւարտելով, օրհնեց զայն Աբրահայրը եւ վրան ձայնաւոր պատարագ մատոյց: Խորանին առջեւ եղած դամբարանին մէջ թաղուեցան երկու վաճառականք, եւ վրանին քանդակուեցաւ հետեւեալ արձանագիրը.

«Ղափանեցիք Շահումեանց տան
Պարոն Զաքարն որ է Դաւթեան
Պարոն Ստեփան Վարդանէսեան
Պարոն Նահապետ Պողոսեան
Ետուն չինել զայս սուրբ սեղան
Եւ ընդ նմին զայս դամբարան
Ի յիշատակ եւ ի կայան,
Բնակից որք են ճիւղք նոյնոյ տան
Յամի Տեառն 1737 Յուլիս 30»:

Հ. Յովհաննէս վրդ. Թորոսեան,
վարդ Մխիթար Աբրահար, տպ. վեմետիկ, էջ 365:

(Շար. 4)

Հ. ՍԱՄՈՒԷԼ ՎՐԴ. ԱՐԱՄԵԱՆ